№ 50 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 18 — 1899 — ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 18 № 50

ՔՍԱՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՅ **1899** ԹԻԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

(27-ՐԴ ՏԱՐԻ)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

«ՄՇԱԿԸ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ր., ինն և ութ ամսվանը՝ 8 ր., եօթ ամսվանը՝ 7 ր., վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԹՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բաղարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։

Կարգութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ»; իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նախաձեռնող է հարկաւոր.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Մատենագրութիւն. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թիւրքիա. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Իմ նամակները։

ՆԱԽԱՁԵՌՆՈՂ Է ՀԱՐԿԱՒՈՐ

Նուռով կը վերջանայ մեր տասնիններորդ դարը։ Մի՞թէ ոչ մի հիմնարկութիւն չի մտածի ներկայացնել մի հաշիւ, թէ ի՞նչ դրութեան մէջ է մեր երկիրը վերջացնում մի դար և մտնում միւս դարը։ Կովկասը ներկայ տասնիններորդ դարի մէջ արթնացաւ իր դարաւոր թմրութիւնից և սկսեց առաջադիմութեան քայլեր անել։ Այս դարը կը մնայ Կովկասի տարեգրութիւնների մէջ շատ նշանաւոր, իբրև նրա նոր կեանքի, իբրև նրա կուլ'տուրական շարժման և համաշխարհային շփման մի բեղմնաւոր սկզբնաւորութեան դար։ Այն փոփոխութիւնները, որ կատարվել են մեր երկրի հասարակական և տնտեսական կեանքի մէջ՝ դեռ խոր արմատներ չեն գցել, բայց նրանք հիմնական են, էական և ճակատագրական։ Ուղղութիւնը և հոսանքը որոշված են, միայն ժամանակ է պահանջվում՝ սկսված շարժման ճիւղաւորութիւնները տեղ հասցնելու։

Շատ կարևոր է, որ մեր կեանքը ենթարկվեր լուրջ և խոր ուսումնասիրութեան։ Եթէ ներկայ մեր վիճակը, մեր կեանքի վրա ազդող պայմանները, մեր անցեալի շարունակվող հանգամանքները չը հետազօտվեն և չարձանագրվեն ճիշտ և դիտական կերպով՝ ապագայում մենք զանազան դժուարութիւնների առաջ կանգնած կը լինենք և անկարող կը հանդիսանանք հասկանալու շատ երևոյթներ մեր կեանքի մէջ։ Նոյն-իսկ ներկայումս ամենասովորական երևոյթներ, ինչպէս են աւազակութիւնը մեր երկրում, ցեղերի և ազգութիւնների մէջ նկատվող համերաշխական և թշնամական յարաբերութիւնները, երկրի սովորութիւնների և իրաւաբանական հասկացողութիւնների գործնական արտայայտութիւնները և ուրիշ հանգամանքներ—մեծ վէճերի և թիւրիմացութիւնների առարկայ են դառնում և բազմաթիւ մեկնութիւնների նիւթ։ Իսկ որքան աւելի կը հեռանանք մեր ժամանակից՝ այնքան աւելի կը դժուարանայ հետազօտութեան գործը, անցեալի երևոյթները կենթարկվեն չափազանց դուշնաւորութեան, կարողութիւն չունենալով զտվել՝ ճիշտ փաստերի բացակայութեան շնորհիւ։

Մասնաւոր անհատների համար շատ դժուար է սկսել մեր առաջարկած գործը, որովհետև դրա համար պահանջվում են նիւթական ապահովութիւն, ազատ ժամանակ և մեծ համբերութիւն ու ընդարձակ գիտութիւն։ Բայց դա համեմատաբար հեշտ է հիմնարկութիւնների համար, որոնց թիւը Կովկասում թէև մեծ չէ, բայց կարող է բաւարար լինել ներկայ գործի համար։ Թիֆլիսում կան մի քանի հիմնարկութիւններ, որոնք եթէ ցանկանային միանալ այս նպատակի համար՝ կարող էին էական ծառայութիւն մատուցանել ժամանակակից այդ պահանջին։ Թիֆլիսի աշխարհագրական ընկերութիւնը, որ ունի գործունէութեան լայն ծրագիր, միանալով իրաւագիտական, գիւղատնտեսական, տեխնիկական ընկերութիւնների հետ, հրաւիրելով գործակցութեան Բագուի տեխնիկական ընկերութիւնը և երկրի մէջ գտնված բազմաթիւ ինտելիգենտ անձանց, օգտվելով զանազան հիմնարկութիւնների ժողոված և հրատարակած նիւթերից՝ կարող են անկասկած իրագործել մեր երկրի վիճակագրական, հասարակական, ազգագրական և տնտեսական հետազօտութեան գործը։

Շատ քիչ ժամանակ է մնացել։ Գէտք է վաղօրօք սկսել ձեռնարկել գործի, որպէս զի նա փոքր ի շատէ նպատակայարմար և աջող կերպով կատարվի։ Ո՞վ պէտք է վերցնէ իր վրա այդ նախաձեռնութիւնը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Ժողովրդական կրթութիւնը մեր ժամանակներում դառնում է մի վերին աստիճանի հզօր գործօն, որից կախված է ամբողջ մի երկրի, ամբողջ պետութեան այժը, բարօրութիւնը, կենսունակութիւնը։ Մինչև այժմ էլ ռուսաց մամուլի մէջ դեռ չէ դադարում օտար կապիտալների մասին ծագած հարցը։ Ինչպէս գիտենք՝ շատ շատերը կան, որոնք չեն վախենում այդ կապիտալների հեղեղից, փաստերով, տնտեսագիտական և պատմական օրէնքներով ապացուցանում են, որ օտարների արշաւանքը չէ նշանակում, թէ Ռուսաստանը ծախվում է օտարներին, այլ այն միայն, որ մենք կարօտ ենք ուսուցիչների, կարօտ ենք ձեռնարկող, ղեկավարող այժերի։ Ճիշտ է, կայ օտար կապիտալների սարկացնող այժը, կայ այն հանգամանքը, որ շատ տեղերում եւրօպացի դրամատէրերը, շահագործելով բնական հարստութիւնները և ահագին հարստութիւններ դիզելով՝ ոչինչ չեն տալիս տեղացիներին, բայց այդ երևոյթն էլ ունի իր պատճառը, դա այն է, որ հարստահարվում են անպատրաստ, ազգութեան մէջ թաղված երկիրները. և Ռուսաստանը չէ կարող այդ վիճակին ենթարկվել՝ եթէ նա առանձին ուշադրութիւն դարձնէ ժողովրդական կրթութեան վրա։ Որ այդ միջոցը կարող է միանգամայն կերպարանափոխել երկիրը, ներշնչել նրան հսկայական այժ՝ ապացոյց կարող է համարվել Եապոնիան, որ մի կարճ միջոցում հասաւ Արևելեան Ասիայի համար անսովոր քաղաքակրթութեան աստիճանին և դարձաւ ուժեղ պետութիւն։ «С. Петербург. Вѣд.» լրագիրը շատ հետաքրքրական տեղեկութիւններ է հաղորդում Եապոնիայի ժողովրդական կրթութեան մասին։

Երբ 30 տարի սրանից առաջ Եապոնիան վճռեց մտնել եւրօպական քաղաքակրթութեան ճանապարհը՝ կայսրը, դիմելով ժողովրդին, ասաց իր հրովարտակի մէջ, թէ կրթութեան գործի վերաբերմամբ իր ցանկութիւնն է, որ ամբողջ երկրում չը լինի մի հատ գիւղ՝ ուր տգէտ ընտանիք լինէր, և մի հատ ընտանիք՝ ուր լինէր մի անգրագէտ անդամ։ Այն

նակից Եպաշնիայի պետական մարդիկ, անշեղ դիմելով դէպի այդ իդէալը՝ բոլոր ջանքերը գործադրում են, որ ամենալայն չափերով տարածեն կրթութիւնը ժողովրդական մասսաների մէջ։ Այժմ գրագիտութիւնը Եպաշնիայում տարածված է շատ սաստիկ և, ինչպէս վկայում են ընդհանրապէս՝ այնտեղ քիչ կարելի է գտնել մի մարդ, որ չիմանար գրել կամ կարդալ։ Տարրական կրթութիւնը պարտադիր է ամենքի համար։ Ամբողջ Եպաշնիայում 1897 թւի վերջին կային 26,860 սկզբնական դպրոցներ, որոնցից 26,361 դպրոց պահվում էր տեղային համայնքների հաշւով, 497—մասնաւոր մարդկանց միջոցներով և միայն 2 հատ—պետական հաշւով։

Ի հարկէ, միայն տարրական կրթութեամբ չէ բաւականանում Եպաշնիան։ Այդ կրթութիւնը առաջ է բերում և միջնակարգ ու բարձրագոյն կրթութեան պահանջ։ Միջնակարգ դպրոցների թիւը 1897 թւին 157 էր, և դրանցից միայն մի հատ էր պահվում պետական հաշւով։ Կան և երկու հատ հատուկ դասարաններ, 2200 ուսանողներով։

*

Ի դէպ. ինչպէս է տարածված գրագիտութիւնը Կովկասում։ Ժամանակակից տնտեսական հանգամանքների մէջ շատ կարևոր, նոյն-իսկ վճռական նշանակութիւն ունի այս հարցը։ «Торгово-Промышл. Газета» լրագիրը տպագրել է մի մեծ յօդուած, որի մէջ ցոյց է տալիս, թէ ժողովրդական կրթութիւնը որքան անհամապատասխան կերպով է տարածված, համեմատելով ազգաբնակութեան խտութեան և տնտեսական պահանջների հետ։

Կովկասում ազգաբնակութեան խտութիւնը նոյնն է, ինչպէս և Վոլգայի ափերի մի քանի նահանգներում, և շատ բարձր է հիւսիսային նահանգների խտութիւնից. այն-ինչ կրթութեան գործը Կովկասում առհասարակ շատ քիչ է զարգացած, քան այդ նահանգներում։

Չը նայած արդիւնագործութեան և վաճառականութեան զարգացման, ժողովրդական ըստկզբնական կրթութիւնը յետ է մնում։ Եւ այս հանգամանքը հակառակ է նոյն-իսկ արդիւնաբերական-առևտրական կեանքի պահանջներին։ Հարկաւոր են փոքր ի շատէ զարգացած, գոնէ տարրական կրթութիւն ստացած բանւորներ. այդպէս է պահանջում ժամանակակից տեխնիկան։ Եւ այդ պատճառով յօդուածագիրը առաջարկում է դպրոցական հարկ դնել արդիւնագործական և առևտրական հիմնարկութիւնների վրա և այդ հարկը բացառապէս գործ դնել գործարանների մօտ և առևտրական կենտրոններում դպրոցներ բաց անելու համար։

*

Մենք արդէն հաղորդեցինք, որ Պետերբուրգի բարձրագոյն դպրոցների ուսանողներն և ուսանողուհիները հրապարակով յայտարարեցին, թէ չեն ուզում ստանալ «Новое Время» լրագիրը։ Այժմ Պետերբուրգից գրում են «Одесскій Листокъ» լրագրին, թէ Սուվորինի բաժանորդներից մօտ հազար հոգի հրաժարվեցին այսուհետև ստանալ «Новое время» լրագիրը։ Այս առիթով «Одесскія Новости» լրագիրը նկատում է.

Բանը նրանումն է, որ այդ ճարպիկ նաւավարը (Սուվորին), որ միշտ քիթը տանում էր քամու հետ՝ այս անգամ սխալվեց և չիմացաւ թէ որտեղից է փչում քամին։

Բացի այդ բոլորից «С. Петербургскія Вѣд.» լրագրում տպված է մի նամակ, որից իմանում ենք հետևեալը։ Պետերբուրգի Կայսերական հանրաբանական ընկերութեան նիստում, որ կայացաւ մարտի 9-ին՝ զեկուցվեց 35 անդամների կողմից տուած հետևեալ յայտարարութիւնը.

Թանդ գնահատելով Պետերբուրգի Կայսերական հանրաբանական ընկերութեան արժանապատուութիւնը և ցանկալի չը համարելով, որ այդ պատկառելի և ամենից յարգված ընկերութիւնը որևէ յարաբերութիւն ունենայ «Новое Время» լրագրի հետ՝ մեք, ստորագրողներս, դիմում ենք ընկերութեան վարչութեան, խնդարհաբար խնդրելով այսուհետև չը հաղորդել յիշած լրագրի խմբագրութեան որևէ տեղեկութիւն, որ վերաբերում է ընկերութեան գործունէութեան։

Պատասխանելով 35 անդամների այս խնդիրքին՝ վարչութիւնը յայտարարեց, որ նա կը դադարեցնէ իր բոլոր յարաբերութիւնները «Новое Время» լրագրի հետ։ Բերելով այս նամակը՝ Սուվորինի օրգանը ինչ-որ բացատրութիւններ է պահանջում Հանրաբանական ընկերութեան վարչութիւնից և ի վերջոյ ասում է.

Մենք ամենևին չենք պատկանում հանքերի թւին, որոնց հետ կարելի է անել ինչ կամենաք, այլ կենդանի մարդիկ ենք, խօսուն, մտածող և նոյնպէս ազնիւ՝ ինչպէս Կայսերական հանրաբանական ընկերութեան անդամները։ Ուրիշի բարի անուան դէմ փորձ անել, չը բերելով փաստեր՝ հայհոյանք և չարախօսութիւն է, որ վայել չէ ոչ մի ընկերութեան։ Սպասում ենք պատասխանի։

O sancta simplicitas! Եւ կարծես ինքը, Սուվորին, շատ պինդ է պահում այն կանոնը, որ չէ կարելի անուանարկութիւններ անել, փաստեր չունենալով...

*

Կայ մի հայաբնակ տեղ, ուր չը լինի միևնոյն ազգային դժբախտութիւնը—տգէտ քահանան։ Նա կեղեքում է թէ ռուսահային, թէ թիւրքահային և թէ պարսկահային և այլն և այլն։ «Արևելք» լրագիրը մի ճար է գտել այդ դժբախտութեան դէմ—երանի նորան։

Այս վիճակը մասամբ դարմանելու նպատակաւ, Ճանիկի առաջնորդական տեղապահը վերջերս գնահատելի գաղափար մը ունեցած է, զոր կարժէ մատնանիշ ընել ուրիշ դաւառներու առաջնորդներուն ալ։ Ինը քահանայացու դրված է Արմաշու վանքը, իւրաքանչիւրին համար ամսական 100 դրշ. վճարումով, որպէս զի անոնք քիչ-շատ նախապատրաստութիւն ունենան իրենց անհրաժեշտ եղող ծանօթութեանց մէջ։ Ասոնցմէ չորսը, անցած տարի, վեց ամիս Դպրեվանքին մէջ ուսման պարապելէ ետքը, Գէորգ եպիսկոպոս Երէցեանի միջոցաւ հոս քահանայ ձեռնադրուեցան արդէն և կոչուեցան չորս աւետարանիչներուն անունով։

Առաջարկվում է, որ միւս թեմերն էլ այդպէս վարվեն։ Բերում ենք այս առաջարկութիւնը ոչ իբրև փոքր ի շատէ գործնական և նպատակայարմար միջոց, այլ իբրև նմուշ, որ պիտի ցոյց տայ, թէ որքան անյատակ է քահանայական տգիտութիւնը և որքան քիչ բանով կարող է բաւականանալ այդ դժբախտութիւնից տառապող ժողովուրդը։ Վեց ամիս անց կացնել Արմաշի վանական դպրոցում, մի այնպիսի տեղ, ուր տարիներով սովորողները և ուսում աւարտողները մի քանի նման չեն—այդքան ողորմելի պաշարով՝ կրկնում ենք, միայն խեղճ հայն է կարող բաւականանալ։ Մեզ մօտ մի ժամանակ աղմուկով ու աղաղակներով ընծայարաններ բացին, կամ ասացին թէ պիտի բաց անեն, և դարձեալ ոչինչ ազդեցութիւն չունեցաւ այդ «էրէֆօրման» տէրտէրական տգիտութեան վրա։ Թիւրքահայերը, ինչպէս երևում է՝ մեզանից էլ աւելի զրկված են. նրանց համար մեծ բան է և այն, որ տիրացուն այդպիսի ընծայարաններից մէկում գտնէ վեց ամիս մնայ, «գրի հոտն առնէ», ինչպէս ասում է ժողովուրդը։ Ո՞րքան հեռու ենք փոքր ի շատէ նախանձելի դրութիւնից։

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

„Պատմութիւն քրիստոնէական եկեղեցւոյ“—Մելքիսեդեկ եպիսկոպոս Մուրադեանցի։ Գալաց, 1898, 418 երես 8°, գին 3½ ֆրանկ։

Գրականութեան մի այնպիսի նշանաւոր ճիւղ, որպիսին է պատմագրութիւնը, դեռ ևս մեր կղերականութեան արտօնութիւնն է կազմում, մի շատ հին արտօնութիւն, որ տևում է չորրորդ դարից և որի շնորհիւ հայոց պատմութիւնը եկեղեցական սիսլաստիկայի և եկեղեցականների պատմութիւն է միայն։ Ի զուր են պարծենում՝ թէ մեր դարի լուսաւորութիւնը խլեց կղերականից գրականութիւնը։ Դա մի բացարձակ, ամբողջ ճշմարտութիւն չէ։ Հայ կղերը սիրահարական վէպեր անցեալում չէ գրել, այժմ էլ շատ քիչ է գրում. բլբուլ ու սէր երգող վարդապետները մի քանի հատ էին միջին դարերում. իսկ բանաստեղծութեան ուրիշ ճիւղերը (դիւցազներգութիւն, բնութեան և հայրենիքի նկարագրութիւն) այժմ էլ մեր եկեղեցականների գրչին նիւթ են տալիս։ Թէ գեղարուեստը, թէ գիտութիւնը հայ վանքի գրական գործունէութեան մէջ միշտ նեղ, սահմանափակ տեղ են գրաւել. Եղնիկները, Ներսէս Շնորհալիները, Ալիշանները շատ ընդհանրացած երևոյթներ չէին և չեն։ Մի բան, որ եղել է և շարունակում է մնալ կղերականութեան սեփականութիւն՝ պատմագրութիւնն է։ Մենք, ի հարկէ, չենք ուրանում, որ եղել են նաև մի քանի հատ աշխարհականներ, որոնք փորձել են իրանց ոյժերը պատմագրութեան ասպարէզում. բայց դրանք էլ—զարմանալի երևոյթ—կղերամիտ մարդիկ են եղել։ Բացառութիւն գուցէ միայն Գարագաշեանը կազմէ, եթէ նա էլ ամեն ջանք գործ դրած չը լինէր, իր հայեացքները, իր քննադատական ընդունակութիւնը թաղել հնամոլ այլանդակ լեզուի ու պատմագիրներից ահագին ցիտատներ բերելու անհասկանալի հիւանդութեան մէջ։

Եւ սակայն մեզ շատ հարկաւոր էր մի զուտ, մաքրած պատմութիւն, լինի նա տոհմային թէ ընդհանուր։ Մի պատմութիւն, որի մէջ եկեղեցական տենդենցիաները տեղի տուած լինեն կեանքի աշխարհական տենդենցիաներին։ Մենք գիտենք, որ եկեղեցական տենդենցիաները հազարաւոր տարիների ընթացքում խեղդել, ճնշել են քաղաքացիական շահերը։ Բայց կայ մեր մէջ մի պատմագրութիւն, որի մէջ պարզված լինի այդ բանը։ Եթէ մենք «տիրացու ազգ» ենք՝ մի՞ թող մի որ և է ասուլի մերձենալը, որը հիմնայատակ կործանելով ներկայի ամբողջ հասարակական կազմը՝ ցանկալի վերջ կը դնէր նրան»...

Այսպէս է Եւրոպայում։

Ռուսաստանը դեռ կապիտալիզմի նորագոյն զոհերից մէկն է. նրա մէջ հաստատաբար դեռ նոր են սկսվում կազմակերպվել հասարակական այն դասակարգերը, որոնք կազմում են կապիտալիստական արդիւնաբերութեան անմիջական հետևանքը։ Բայց այնու ամենայնիւ նա գալիս է—դասակարգերի այդ հզօր անտագոնիզմը,—բերելով իր հետ զեղխութեան և թշուառութեան հակապատկերներ, բարքերի ապականման, ֆիզիքական և բարոյական այլասերման տեսարաններ, որոնց քայքայիչ ազդեցութիւնը արդէն աւելի քան աչքի է զարկում Պետերբուրգի պէս մի խոշոր առևտրական և արհեստագիտական կենտրոնում։ Նա գալիս է, չը նայելով այն տենդային ջանքերին, չը նայելով այն բազմաթերթ, բազմաթիւ գիտական, հրապարակախօսական յօդուածներին, որ տեղում է ռուս ինտելիգենցիայի մի լաւագոյն, հեղինակաւոր մասը գրական հրապարակի վրա։ Եւ այն թշուառ զոհերը, որոնց մասին ես գրել էի անցած նամակումս՝ այդ նորեկ հիւրի աւերիչ ներգործութեան հետևանքներն են։ Գաւառը իւրաքանչիւր օր հարիւրաւոր աշխատող ձեռքեր է դուրս ձգում մայրաքաղաքի հրապարակը, ռուս գիւղացին թողնում է իր գիւղական խրճիթը, իր աւանդական արտն ու գութանը և շտապում գործարանական, առևտրական կենտրոնները՝ բազմացնելու բանւորը պրոլետարիատի շարքերը։ Փողը այստեղ հարստահարում է նրա բոլոր ոյժերը, բոլոր ֆիզիքական և մտաւոր ընդունակութիւնները. նա գնում է նրա սրբութիւն սրբոցը ու նրա խիղճը և ապա դուրս նետում այդ այլասերված հաշմանդամին դէպի փողոց, դէպի թշուառութեան և սոված մահի գիրկը, նոր զոհեր որոնելով իր համար ժողովրդի աւելի առողջ և դեռ չապականված տարրերում։

Եւ գիտես, որքան ահագին տարբերութիւն կայ մեր և եւրոպացի բանւորի մէջ։ Ես կը բերեմ քեզ համար մի փոքրիկ կտոր անգլիացի հեղինակ Կիդդի մի խիստ հետաքրքրական գրքից, որ այնքան մեծ աղմուկ հանեց Եւրոպայում. «Մեր ժամանակի ամենանշանաւոր և զարմանալի երևոյթներից մէկը այդ Դեմոսի տեսքն է, որը հետզհետէ դուրս է գալիս սոցիալական և քաղաքական ստրկութեան երկարատև լռութիւնից. այժմ նա գալիս է ոչ յեղափոխութիւններին յատուկ տենդային արագութեամբ, այլ հանդարտ և վեհ քայլերով, որ տանում է դէպի բնական էվօլիւցիան։ Այժմ նա այլ ևս սնացած չէ ցնխից. նա գրագէտ է, որովհետև մենք ունենք հանրական կրթութիւն։ Այժմ փակ չէ նրա բերանը, և նա զուրկ չէ քաղաքական ոյժից, որովհետև մենք ունենք ընդհանուր ընտրողական իրաւունք»։

Ցգրութիւն. Քո ցի.—Մեն.

Մարտի 1. 99 թ.
Պետերբուրգ.

ինկի հոտ է բուրում ամեն մի տողից։ Եթէ կայ մեր դարում մի կարևոր պահանջ եկեղեցու վերաբերմամբ՝ այդ այն է, որ ժամանակակից մարդկութիւնը պիտի որոշ և ճշգրիտ հասկացողութիւն կազմէ այն դերի մասին, որ կատարել է եկեղեցականութիւնը իր անցեալի մէջ։ Զը մոռանալ նրա արած ծառայութիւնները, բայց միևնոյն ժամանակ տեղեակ լինել և պակասութիւններին—սա է պատուիրը։ Մելքիսեդեկ եպիսկոպոսի գրքի նման գրքեր շատ են եղել մեր մէջ և նրանց վրա կրթվել են մեր հին սերունդները։ Այժմեանները, նորերը բոլորովին ուրիշ պահանջներ ունեն թէկուզ նոյն-իսկ եկեղեցական պատմութեան վերաբերմամբ,—պահանջներ, որոնք անկատար են մնում, ինչպէս և ուրիշ շատ նրանց նմանները։ Լ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թաւրիզ, մարտի 4-ին

Առրպատականի Հայուհեաց Բարեգործական ընկերութեան վարչութիւնը պատիւ ունի յայտնելու իր անկեղծ շնորհակալութիւնները գերապատիւ Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեանին, որ բարեհաճել է Աստրախանի մի քանի տիկնանց ժողոված 557 ռուբլի գումարը, եղբ. Թումանեանների գրասենեակի միջոցով, հասցնել վարչութեանս՝ գործադրելու ըստ իր ցանկութեան։

Վարչութիւնս պատիւ ունի յայտնելու իր շնորհակալութիւնները նաև բազուաբնակ տիկին Շուշանիկ Տէր-Մարգարեանին, որը նուիրելով ընկերութեանս 120 ռուբլի՝ ընդունվել է մշտնջենաւոր անդամ։ Բացի դրանից, վարչութիւնս շնորհակալութեամբ ստացել է պ. Ստեփան Տէր-Օհանեանից նուէր 100 թուման, պ. Նիկողոս Ալէքսանեանից (Աստրա) նրա հանգանակած 60 ռուբլի գումարը։

Վարչութեան նախագահ՝

Հեղինէ Ֆորժ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ինչպէս յայտնի է՝ նորերս լրացաւ Թիֆլիսում գոյութիւն ունեցող ջրից ազատող ընկերութեան բաժնի քսանհինգամեակը։ Այդ առիթով ընկերութեան բաժնի փոխ-նախագահ Սուլտան Կրիմ Գիրէյ ստացաւ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեվիչից հետևեալ հեռագիրը. «Շնորհաւորում եմ ընկերութեան Թիֆլիսի շրջանի հիմնարկութեան քսանհինգամեակը. ցանկանում եմ առաջիկայում բարգաւաճում և յայտնում եմ ձեզ շնորհակալութիւնս սիրալիր հեռագրի համար». «Միխայիլ»։ Մեծ Իշխանին ուղարկված է եղել հետևեալ հեռագիրը ընկերութեան կողմից. «1874 թուականին Ձեր Կայսերական Բարձրութիւնը կեանքի կոչեցիք Կովկասի մէջ ճաւաբեկութեան միջոցին վտանգվողներին ազատելու ընկերութիւնը», որ այժմ դարձել է ջրից ազատելու ընկերութիւն։ Ընկերութեան Թիֆլիսի շրջանի ընդհանուր ժողովը, տօնելով քսանհինգամեայ տարեդարձը՝ որոշեց Ձեր Կայսերական Բարձրութեան ոտքերի առաջ արկանել Թիֆլիսի շրջանի անդամների անհուն հաւատարմութիւնը»։

—

Վ. Սվաճեանի նուագահանդէսը, որ տեղի ունեցաւ երեքշաբթի, մարտի 16-ին, գրաւել էր Թիֆլիսի ժողովարանը հանդիսականների մեծ բազմութիւն։ Նուագահանդէսը բաղկացած էր երկու բաժնից, առաջինը կազմված էր եւրոպական յայտնի երաժիշտների երկասիրութիւններից, իսկ երկրորդը պ. Սվաճեանի սեփական հեղինակութիւններից։ Առաջին բաժնի մէջ տրպաւորութիւն թողին Շոպէնի Nocturne, Ֆօրէի Valse և Լիստի St François de Paule։ Երկրորդ բաժնի մէջ նուագած առաջին վեց կտորները գործում էին երաժշտական զողտրիկ զգածված ոտանաւորների տպաւորութիւն, իսկ Rapsodie-ն ունեցաւ կատարեալ ազդեցութիւն։ Հանդիսականների շրջանում, որ եկել էր նուագահանդէսին առանձին մի ոգևորութեամբ՝ կօնցերտի անտրակտում և կօնցերտի վերջանալուց յետոյ տեղի ունեցան ջերմ խօսակցութիւններ և վիճաբանութիւններ նուագի մասին։ Հակասական կարծիքները, որ լսվում էին, կենտրօնացած էին այն հարցի մէջ, թէ ինչ չափ պէտք է գործադրել Սվաճեանի նուագելը բնորոշելու համար, որովհետև կայ մի չափ, որ առաջնակարգ ընդհանուր եւրոպական հանրահռչակ երաժշտի համար է, և կայ այնպիսին, որ բարեխիղճ և հմուտ երաժշտի համար է։ Պ. Սվաճեան ունի աներկբայելի մշակած տեխնիկա, զեղեցիկ թաւշեայ նուագ, ամուր զարկեր՝ որոտներ առաջ բերելու, ունի երաժշտական նուրբ ըմբռնողութիւն և բանաստեղծական ոգևորութիւն, և սակայն նա չը գործեց ցանկալի ուժեղ և յուզիչ տպաւորութիւնը մեր հասարակութեան վրա։ Դա բացատրվում է, մեր կարծիքով, հետևեալ երկու հանգամանքով. առաջինը՝ պ. Սվաճեան հետևում է նուագելու մի առանձին մեթոդի, որին ընտելացած չէ մեր հասարակութիւնը, երկրորդ՝ եղանակների մէջ տեղի ունեն ծայրայեղ թռիչքներ ոչ իբրև բացառութիւն, այլ իբրև կանոն. գոռ ձայներից և մեղմ մրմունջներից դուրս՝ չը կան միջին կապող ձայներ, և ցածը նստերը այնքան արդէն կամացուկ են և յամրաշարժ, որ հանդիսականը յոգնում է լռութեան հաւասար ձայներին ունկնդիր լինելուց։ Պ. Սվաճեանի նուագած Rapsodie-ն, որ ազատ էր այդ յատկութիւններից՝ թողեց սքանչելի տպաւորութիւն և արժանացաւ բուռն ծափահարութիւնների։ Առհասարակ նուագահանդէսի երկրորդ մասը նպաստաւոր էր դաշնակահարի համար, և նրա աջող կատարումը ոգևորութիւն ներշնչեց հասարակութեանը, որ իր bis-երով ստիպեց դաշնակահարին նորից չորս կտոր նուագելու։ Պ. Սվաճեան երէկ ճանապարհ ընկաւ դէպի Բագու այնտեղ կօնցերտ տալու նպատակով։

—

Աւետիք Անարանեանի անտիպ «Նորածին» վէպի ռուսերէն թարգմանութիւնը, «Новорожденный» անունով, տպագրված է «Міръ Божій» ամսագրի մարտի համարում։ Վէպի թարգմանիչն է Մկրտիչ Կարա-Մուրզա։

—

«Մշակի» անցեալ համարում մենք յայտնեցինք, որ առաջիկայ շաբաթ օր տեղի կունենայ «Մանուկների հոգատար ընկերութեան» ընդհանուր ժողովը։ Այդ ժողովի պարապմունքները կը լինեն—հաշուի և նախահաշուի հաստատութիւնը, վարչութեան չորս անդամի, երկու թեկնածուի և վերաստուգող յանձնաժողովի ընտրութիւնը և մի քանի կարևոր խնդիրներ, այն է քաղաքամասերի հոգաբարձութիւնների համար մշակված հրահանգի քննութիւնը, ժանկական տներին խորհուրդների համար հրահանգի քննութիւնը։ Ընդհանուր ժողովի նիստին կարող են ներկայ լինել ընկերութեան այն անդամները, որոնք իրանց անդամավճարները տրված են։ Անդամավճարներ կարելի է տալ և ժողովի օրը։

—

Երգիչ Արշակ Կոստանեան, ստանալով Վլադիկաւկազից հրաւէր՝ ուղևորվեց այնտեղ մասնակցելու օպերային խմբի ներկայացումներին։ Կոստանեան մտադիր է տալ այնուհետև կօնցերտներ Վլադիկաւկազում, Նոր-Նախիջևանում և վերջնականապէս մնալ Ճմեռվայ սեզօնին Մոսկվայում, որտեղից նա ստացել է հրաւէր։

—

«Сибирскій Вѣстникъ» լրագիրը հաղորդում է, որ մարտի 4-ին Տօմսկի հաւաքարանի դռների վրա կպցրած էր հետևեալ յայտարարութիւնը. «Արևմտեան Սիբիրի ուսումնարանական շրջանի կառավարչի կարգադրութեան համաձայն, դասախօսութիւնների ընթերցումը Տօմսկի կայսերական համալսարանում ներկայ մարտի 4-ից և ուսանողների մուտքը համալսարանական բոլոր շինութիւնները՝ դադարեցրած են ցնոր կարգադրութիւն։ Մարտի 3-ին 1899 թ։ Համալսարանի ռէկտոր պրոֆէսոր Մ. Պոպով»։

—

Երկրագործութեան մինիստրութեան մէջ շուտով կը քննվեն նաւթահանքերում հրդեհների առաջն առնելու համար գործադրելիք նոր կանոնները։

—

Լրագիրների խօսքով՝ հարց է յարուցված 7 ժամվայ աշխատանք որոշելու դեղատներում աշխատողների համար։ Ցամենայն դէպս օրական 8 ժամից աւելի չը պէտք է աշխատանք ունենան դեղատան մէջ ծառայողները, ինչպէս որ ընդունված է եւրոպական պետութիւններում։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ ռուսաց Աշխարհագրական ընկերութեանը թոյլ է տրված 42,000 ռ. տալ՝ նոր դիտական արշաւանք ուղարկելու կենտրօնական Ասիա։

—

Բարեգործների ուշադրութիւնն ենք դարձնում Սուրգուտեան Զավահիր և նրա դուստր Ոսկիի աղքատ դրութեան վրա, որոնք զուրկ են աշխատող ձեռքերից և կողմնակի նպաստներից։

—

ՄԵՂՐԻԻՑ մեզ գրում են. «Տեղիս այգիներում խաղողի որթերի վրա երևացել է մի տեսակ հիւանդութիւն, որ տարէց տարի վնասներ է պատճառում։ Այգիներ կան, ուր 10—20 խաղողի որթեր են չորացել. որթերը ամբողջապէս չորանում են, և այդ, գիւղացիների ասելով, մեծ ծաւալ է ստանում։ Շատերը կասկածում են, որ կարող է Ֆիլօկսերա լինել։ Ցանկալի կը լինէր, որ Գիւղատնտեսական ընկերութիւնը մասնագէտ ուղարկէր՝ տեղն ու տեղը քննելու հիւանդութեան պատճառները և ցոյց տար գիւղացիներին բժշկութեան կանոնները»։

—

ԿՈՂԲ գիւղից մեզ գրում են. «Մեր գիւղում ապրում է մի կիսանդամալոյծ այրի կին, որի վրին ընկած են մի քանի որբեր։ Անբախտ այրին, չունենալով ոչ մի եկամուտ՝ իր և իր զաւակների թշուառ կեանքը պահպանում է բարի մարդկանց տուած ողորմութիւնով։ Մեր գիւղական տանուտէրներից մէկը անցեալ տներին գովելի եռանդով ժողովարարութիւն է անում յօգուտ այդ անօգնական ընտանիքի և բաւականաչափ այուր ու ցորեն ժողովելով, մի օր ուշ գիշերով տանում է յանձնելու որբերի մօրը, և իր կրած չարչարանքի փոխարէն «վարձատրութիւն» է պահանջում։ Բարի տանուտէրի կեղտոտ ակնարկութիւններից հասկանալով նրա միտքը՝ տարաբախտ տանտիկինը արտասվելով աղաչում է իր «բարերարին» հեռանալ տանից և թողնել, որ ինքը «իր ցաւով տապակվի»։ Բայց անամօթ «բարեգործը» բոլորովին ուշադրութիւն չէ դարձնում նրա թախանձանքի վրա և փորձում է զօռով բռնաբարել անտէր կնոջը... Խեղճ այրին յուսահատութիւնից սկսում է ճչալ ու աղաղակել... վրա են հասնում հարևանները, բայց հրէշ տանուտէրը արդէն ձլկված է լինում։ Հէնց նոյն օր «բարերարը» վռնդվեց պաշտօնից»։

—

ԳԷՁՐԼՈՒ գիւղից մեզ գրում են. «Սրանից երեք շաբաթ առաջ Գէչրլու գիւղում ծաղիկ և կարմրուկ հիւանդութիւնները մասամբ մեղմացել էին. բայց այժմ նորից սաստկացան, մանաւանդ կարմրուկը. մի օրում 3 երեխայ մեռան կարմրուկից»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԻԱ

Սուլթանին շրջապատողների ամբողջ ուշադրութիւնը, ասում է «С. Петерб. Вѣд.» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը, դարձրած է երկրի ներքին անկարգութիւնների վրա, որոնք օրէց օր աճում են և այսօր կամ վաղը սպառնում են ապստամբութեան փոխվել։ Սովը մի քանի վիլայէթներում և կառավարութեան կատարեալ անտարբերութիւնը, որը կատարելապէս ոչինչ միջոցներ ձեռք չէ առնում այդ պատուհասի դէմ, որը հազարաւոր զոհեր է տանում՝ առիթ են տալիս ամենամեծ վիլայէթներում տիրող անկարգութիւններին։ Ուշադրութիւն չը դարձնելով խառնակութիւնների պատճառների վրա՝ կառավարութիւնը միայն մի նպատակի է դիմում, այն է՝ դադարեցնել խառնակութիւնները, սաստիկ պատժելով այն թշուառ արարածին, որը քաղցածութիւնից համարձակվում է յուսահատ աղաղակներ արձակել։ Կառավարութիւնը ամբողջ զօրաբաժիններ է ուղարկում այն վիլայէթները, ուր բնակիչները, սովից ուժասպառ, յանդգնում են օգնութիւն պահանջել տեղական իշխանութիւններից։ Բնակիչները թողնում են ամբողջ գիւղեր և գնում են այն հարևան վիլայէթները, ուր դեռ սովը իր սարսափելի ճիրանները չէ ցոյց տուել։ Այդ վիլայէթների բնակիչները պաշտպանում են իրանց գոյքը եկողներից, բայց սոված եկուորները, կատարելապէս կորցնելով օրէնքի պահանջներին ենթարկվելու ընդունակութիւնը՝ ձեռքն ընկածը կողոպտում են, իսկ հարկաւոր դէպքում դիմում են և խէնջարի ու դաշոյնի օգնութեան։

Եմէնից ստացված վերջին տեղեկութիւններից երևում է, որ այնտեղ սովը հաստատ կերպով բոյն է դրել, և արիւնարբու նահանգապետ Աբդուլլահ-փաշան վճռել է զէնքի ոյժով վերջացնել սովը։ Նահանգապետը սուլթանին հաղորդեց, որ ապստամբութիւնը Եմէնում այնքան մեծ չափեր էր ընդունել, որ արաբական շէյխի դրօշակի տակ հաւաքվել էին 30,000-ից աւելի ապստամբներ և թէ ինքն ստիպված էր նորերս կտրական ճակատամարտ տալ, որի ժամանակ արաբների կողմից սպանվեցին մօտ չորս հազար մարդ։ Իր զեկուցման վերջը Աբդուլլահ-փաշա նախագուշացնում է, որ ղժգոհութիւնը զօրքի մէջ ժամ առ ժամ աճում է և եթէ արաբները երկրորդ անգամ ապստամբվել ուզենան՝ Եմէնի բերդապահ զօրքերը կը հրաժարվեն պատերազմելուց և կը միանան ապստամբների հետ։ Զօրքերը պահանջում են հաց, հագուստ և ռոճիկ, իսկ այդ անյետաձգելի պահանջին բաւարարութիւն տալու համար նահանգապետը խնդրում է անյապաղ ուղարկել 50,000 լիրա։ Երկու օր առաջ Իլդիզ-Քիոսկից մի յատուկ սուրհանդակ ուղարկվեց, որը Աբդուլլահ-փաշայի համար տանում է 20,000 լիրա սուլթանի սեփական գումարներից։ Հաղիւ թէ այդ գումարը գոհացնէ թիւրքաց զինուորներին, որոնք չը լսված կարօտութիւն են զգում Եմէնի վիլայեթում։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Ուրմի, մարտի 1-ին

Փետրվարի 25-ին, Վարդանանց տօնի առիթով, տեղիս հայոց ուսումնարանում հանդէս և հոգեհանգիստ կատարվեց։ Աւետիս քահանայ Շաղոյեանց, կարճ և ազդու խօսքերով, բացատրեց ժողովրդին Վարդանի նշանակութիւնը։ Երգեցողութիւնը բաւական ներդաշնակ էր. հանդիսականները ուրախ տպաւորութեան տակ հեռացան ուսումնարանից։ Շնորհիւ պ. ուսուցչի աշխատասիրութեան՝ այս տարի մեր ուսումնարանը բաւական կանոնաւորված է. ուստի կը յուսանք, որ մօտիկ ապագայում բախտ պիտի ունենանք աւելի կանոնաւոր հանդէսներ և ներկայացումներ տեսնել։

Փետրվարի 7-ին, տեղիս պապագաւան ասորոց եկեղեցում կատարվեց Ֆէլիքս Ֆօրի հոգեհանգիստը. հրաւիրված էին նշանաւոր թուրք պաշտօնեաներ և իւրաքանչիւր դաւանութեան պատկանող քրիստոնեայ ազգապետներ։ Հայերից, բացի պ. Իզրայէլ Բուդաղեանից, ոչ ոք հրաւիրված էր. անտեղի խորութիւն։

Անցեալները Ռահվայի ուսուցիչ պ. Ռոստոմ Զոհրաբեանի մասին գրածիս վերջին մասը սխալ էր։ Նա խլամութիւն չէ ընդունել և միւշտայլին դիմել էր ոչ թէ կրօնափոխութեան համար, այլ պաշտպանութիւն գտնելու նպատակով։ Այստեղի հոգաբարձական ժողովը որոշեց յիշեալ պարոնին արձակել պաշտօնից և Ռահվայի գիւղի ուսումնարանն իր հսկողութեան տակն առնել։ Գուրգէն

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Զմիւռնիայից հաղորդում են «Temps» լրագրին, որ կրետացի 6000 մահմետական գաղթականներ, զուրկ գոյութեան բոլոր միջոցներից՝ այս օրերս կողոպտեցին յունական և թիւրքական թաղերը։ Հաւատացնում են, որ մի քանի սպանվածներ և վիրաւորվածներ կան։

—Անգլիական լրագիրները հաղորդում են, որ Ջոն Դիլլոն, իրլանդական նացիոնալիստների պարագլուխը, Մանչեստերում արտասանած քաղաքական ճառի մէջ յայտնեց, որ իրլանդական և «հօմրուլի» հարցերը շուտով հերթական կը դառնան Անգլիայի ներքին քաղաքականութեան մէջ։ Ցայտնի է, որ իրլանդական կուսակցութիւնը բաղկացած է պարնէլիստներից և նացիոնալիստներից, և առաջինն ոյժը չէ ներկայացնում։ Դիլլոնը յոյս ունի կրկին միացնել իրլանդացիներին։ Շուտով մի կոնֆէրէնցիա տեղի կունենայ Դուբլինում։ Վաթսուն պատգամաւորներ արդէն ընդունեցին հաշտութեան սկզբունքը։

—Հաագից հաղորդում են «Berl. Tageb.» լրագրին, որ Վիլհէլմինա թագուհին խաղաղութեան կոնֆէրէնցիայի անդամներին յատկացրել է մի շքեղ պալատ։ Կոնֆէրէնցիան երեք բաժանմունք կունենայ, որից առաջինը նուիրված կը լինի զինաթափութեան հարցին, երկրորդը—միջնորդ դատարանի հարցին, իսկ երրորդը—ընդհանուր հարցերի քննութեանը։ Վիճելի հարցերում հաւասար ձայների դէպքում, ենթադրվում է դիմել միջնորդ դատարանի, որի անդամները բաղկացած կը լինեն երեք բաժանմունքների նախագահներից։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Նորերս Նիւ-Եօրկում այրվեց Վինդզոր անուն կրող եօթ յարկանի մի մեծ հիւրանոց, որը 700 սենեակ ունէր։ Նա կառուցված էր 25 տարի առաջ և միշտ վտանգաւոր էր համարվում հրդեհվելու կողմից։ Անցեալ ուրբաթ օրը, երբ հիւրանոցի պատուհանները լի էին հասարակութեամբ, որը կամենում էր տեսնել այդ հիւրանոցի առաջով անցնող թափօրը՝ հրդեհ սկսվեց երկրորդ յարկում։ Բոցը սարսափելի արագութեամբ տարածվեց սենեակներում, ամբողջ հիւրանոցը խոկոն և եթ ծուխով լցվեց։ Խոկոն եկան հրդեհի տեղը Նիւ-Եօրկի բոլոր հրդեհաշէջները։ Երբ հրդեհը սկսվեց՝ հիւրանոցում կային, ասում են, 300 անձինք, որոնց թւում և նախագահ Մակ-Կինլէի եղբայրը։ Ամերիկական լրագիրները այժմ նոր մանրամասնութիւններ են հաղորդում այդ հրդեհի մասին։

Մինչև այժմ գտնված են միայն 14 անձանց այրված դիակներ. դրանցից 12 կանայք են և 2 տղամարդիկ։ 34 հոգի, գլխաւորապէս կանայք, շատ թէ քիչ վնասվել և այլանդակվել են։ Բայց դեռ պակասում են 50—70 անձինք։ Ամբողջ Նիւ-Եօրկը գտնվում է այդ սարսափելի աղէտի տպաւորութեան տակ։ Տանտէր Լէյլեանդ ոչ միայն կորցրեց իր գոյքը, այլ և իր կնոջը և երեխային։ Նրա կնոջը կիսակենդան դուրս բերին սենեակից, բայց նա այնտեղ և եթ մեռաւ վէրքերից, իսկ նրա աղջիկը դուրս թռաւ երրորդ յարկից և ջարդվեց։ Ինքն Լէյլեանդ խեղդվեց և այժմ գժանոցումն է գտնվում։

Հրդեհը, ինչպէս յայտնի է, տեղի ունեցաւ ս. Պատրիկի օրը, որին առանձնապէս յարգանքով են վերաբերվում իրլանդացիները: Այդ օրը իրլանդացիները հանդիսաւոր թափօրով անցնում էին այդ հիւրանոցի առաջ: Թափօրին մասնակցողները սարսափով տեսան, թէ ինչպէս բոցառված մարդիկ վերից յարկերից թռչում էին մայթերի վրա, և հրեղէն լեզուները երևում էին բոլոր պատուհաններում: Մանուկներ և կանայք երևում էին պատուհաններում և աղաղակով ընկնում էին ցած և սպանվում: Երբ հրդեհաշէջները եկան՝ ամբողջ տունը արդէն կրակի մէջն էր:

Այրված հիւրանոցի դիմաց գտնվում է Ելէնա Գուլդի, յայտնի արխիմիլիոնատէրի աղջկայ տունը: Այնտեղ տարան վիրաւորվածներին և մեռնողներին: Միսս Ելէնա Գուլդ մեծ ժողովրդականութիւն է վայելում Նիւ-Յորկում: Նա կարծես թէ աշխատում է իր բարեգործութեամբ մոռացնել տալ այն բոլոր չարիքը, որ գործել է նրա հայրը, որը երբէք ժամանակ չէ գտնում մտածելու ուրիշների մասին: Աղջիկը բոլորովին նման չէ նրան այդ կողմից: Այժմ նա բացել է իր չքեղ տան դռները բոլոր վիրաւորվածների համար և ինքն է նրանց վէրքերը կապում և ծառայում մեռնողներին:

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

16 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Մարտի 16-ին Թագաւոր Կայսրը այցելեց Ալէքսանդրօվսկայա լիցէյը:

ԽԱՐԿՕՎ: Նահանգական դատարանում սկսվել է Սկիտսկի եղբայրների գործի քննութիւնը: Դրանք մեղադրվում են Պոլտավայի կօնսիստորիայի քարտուղար Կաժարովին սպանելու մէջ: Պաշտպանում են երդվեալ հաւատարմատարներ Կարաբչեվսկի և Կուլիկով և մասնաւոր հաւատարմատար Զելենսկի:

ՐՕՍՏՕՎ ԴՈՆԻ ՎՐԱ: Երէկ նաւադնացութիւնը պաշտօնապէս բացված յայտարարվեց: Ճանապարհ ընկաւ պօստային շոգենաւը Եյսկ: Շատ առագաստաւոր նաւեր ծովը մտան: Տաք եղանակից յետոյ այսօր ձիւն եկաւ, սաստիկ քամի էր ու փոքր սառնամանիք:

ԼՕՆԴՕՆ: Թագաւորական աշխարհագրական ընկերութեան ժողովում նախագահ Մակգամ յայտնեց, թէ ընկերութեան անդամ Լօնգստաֆ նուիրել է 25,000 ֆունտ ստերլինգ անգլիական հարաւային բևեռի էկսպէդիցիայի ֆօնդին: Այդ պատճառով ընկերութիւնը կարող է կազմել բոլոր պահանջներին համապատասխանող մի էկսպէդիցիա: Այժմ ֆօնդը հասնում է 40,000 ֆունտի:

ՇԵՐԲՈՒՐԳ: Ռուսաց ծովային կրթական «Герцогъ Эдинбургскій» նաւը եկաւ այստեղ:

ՏՈՒՆԻՍ: Ռուսաց «Донецъ» զրահաւոր նաւը եկաւ Բիզերտա ծովակալ Սկրիդլովի հետ:

ՊԱՐԻԶ: Կօլոնիաների ընդհանուր քարտուղար Մարտինօ նշանակված է Սօմալիի ծովափի կառավարիչ, հանգուցեալ Միզօնի տեղ:

ՆԻԻ-ԵՕՐԿ: Ինչպէս հաղորդում են լրագիրները՝ ֆիլիպիցիները այսօր, պատերազմի ժամանակ, իրանց ձեռքում պահեցին Մարիլաօ և յետ էին մղում ամերիկացիների յարձակումները՝ մինչև ամերիկական արտիլլերիայի գալը: Սպանված են 6 ամերիկացիներ, որոնց թվում երեք օֆիցէրներ. վիրաւորված են—40: Վերջը ֆիլիպիցիները դուրս քշվեցին ամրութիւններից և փախան:

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Մարտի 16-ին

Մուրհակների ընթացքը

Երեք ամսով	Լօնդօնի վրա 10 ֆունտ	.	93,85
„ „	Բերլինի վրա 100 մարկ	.	45,80
„ „	Պարիզի վրա 100 ֆրանկ	.	37,22½
Չէկը	Լօնդօնի վրա 10 ֆունտ	.	94,55
„	Բերլինի վրա 100 մարկ	.	46,30
„	Պարիզի վրա 100 ֆրանկ	.	37,50
Բօրսային դիսկօնտ	. . .	.	6¼—7½%
4% պետական բէնտա	. .	.	100⅜
4% ազն. կալ. բանկի գրաւ. թղթ.		.	99¾
4½% վկայակ. գիւղ. հող. բանկի		.	99¾
5% վճռակ. տոմս. առաջին ներքին փոխ.		.	286¼
5% „ „ երկրորդ „ „		.	255¾
5% „ գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի.		.	223½
5% ոսկու բենտա	. . .	.	161
5% գրաւ. թղթ. փոխ. հող. վարկի ընկ.		.	181
4½% ներքին երկաթուղ. փոխ. 1890		.	100¾
Նոյնը „ „ „ 1892		.	100¾
5% Թիֆլիսի փոխադարձ վարկի ընկերութ.		.	99¾
4½% Թիֆլիսի կալուածատ. բանկի		.	100
6% Բուլմայիսի կալուածատ. բանկի		.	101
5% „ „ „		.	100
Ակցիաներ Ռուս. առևտրա.-արդիւն. ընկ.		.	369
„ Երեք. Նօբէլի նաւթ. ընկերութ.		.	651
„ Կասպիական ընկերութ.		.	687
„ Բաքուայ նաւթ. ընկերութ.		.	850

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

—

Մարդատար № 1 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ՝ երեկվայ 4 ժամին և 15 րոպէին. Թէֆլէս է հասնում առաւօտեան 8 ժամ՝ 38 րոպէին դուրս է գնում՝ ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ առաւօտեան 9 ժամ և 20 րոպէին. Բաթում է հասնում երեկոյեան 8 ժամ և 52 րոպէին:

Մարդատար № 3 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ՝ երեկոյեան 10 ժամ՝ 50 րոպէին. Թէֆլէս է հասնում երեկոյեան 5 ժամ և 9 րոպէին: Դուրս է գնում՝ ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ՝ երեկոյեան 6 ժամ՝ 10 րոպէին. Բաթում է հասնում առաւօտեան 7 ժամին:

Մարդատար № 2 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ՝ առաւօտեան 8 ժամ՝ 30 րոպէին. Թէֆլէս է հասնում երեկոյեան 8 ժամ 30 րոպէին: ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԳՈՒ է դուրս գալիս երեկոյեան 9 ժամ 15 րոպէին. Բագու է հասնում յերեկվայ 12 ժամ 59 րոպէին:

Մարդատար № 4 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ երեկոյեան 8 ժամ 40 րոպէին. Թէֆլէս է հասնում առաւօտեան 9 ժամ՝ 55 րոպէին: ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԳՈՒ է դուրս գալիս առաւօտեան 11 ժամ 20 րոպէին. Բագու է հասնում առաւօտեան 5 ժամ 42 րոպէին:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վլօրոնցօվի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և մրլասեռ. հ.
Կ. Մ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. կանանց հիւանդ.
Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—1¼—2¼ ժ. ներքին և միասեռական հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Վ. Մ. ՄԱԽՎԻԼԱՁԷ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Ն. ՇՊԱԿՕՎՍԿԻ—6—7 ժ. նեարդային (անկարաբուժութիւն), վեներական և մորթի հ.
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—6½—7 ժ.
Տ. Ի. ԲՈՒԴԵՆԿՕ հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է առնում մէզի, խլխի, արեան, կաթի և այլն:
Վճար 50 կ. չքաւորները ձրի: Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
110—150 Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ԿԱՖԷ ՁԻԼԼԷՐ

(Café Siller)

Վիէննա, I. Laurenzerberg. Մեծ և էլէկանտ կաֆէ, բազմաթիւ հայ և ռուս լրագիրներով. գալիս են բոլոր հայ և շատ օտարականներ: Ընտիր սուրճ և լաւ ծառայութիւն: 23—25

Լոյս տեսաւ

ՕԵՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆՑԻ

ՀԱՆԱՔ ՈՒ ԴԱՆԱԿ

Հրատարակութեան I գրքոյկը:

ԳԻՆՆ Է 30 ԿՕՊԵԿ

Դիմել Թիֆլիսի գրավաճառներին կամ հեղինակին՝ Тифлисъ, Чавчавадзевская, д Маркарова № 25а, իսկ Բաքուում.—Խրլէկէլի գրավաճառանոցին: 9—10

ԲԺԻՇԿ Յ. Յ. ՂՕԿԻԵԼԵԱՆ

Ընդունում է՝ վեներական, ախտական, մորթու և ներքին հիւանդութիւն ունեցողներին՝

Առաւօտեան 9—12 ժամը
Երեկոյեան 5—7 ժամը:

Գանձակայա փողոց, տուն Մարգարովի, № 31:
(Ե. Հ. Չ.) 14—100

Կովկասի ՀԱՑՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

գրադարան-ընթերցարան

(Միջին փողոց, տ. Տէր-Աստուրովի, Աղելխանովի մաղազինի գլխին), բաց է առաւօտեան ժամը 9—2 և երեկոյեան ժամը 5—9: Սաստվում են մայրաքաղաքների և տեղական բոլոր թերթերը: Մուտքը 2 կոպ., ամսով 40 կ. աշակերտներից կէս վճար: 21—50

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ—ՊԱՆՍԻՕՆ

Ա. ՏԷՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻ

Ընդունում է երեխեկ, կիսաթուչակաւոր և գիշերօթիկ աշակերտներ: Պատրաստում է գիմնազիաների, կադետների կօրպուսի, զեմլէմէրների, բէալական և այլ ուսումնարանների համար:

Փոքր պատրաստականում երեխաները ընդունվում են առանց քննութեան, վեց տարեկանից սկսած: Ուսումնարանում ուսուցանում են բարձրագոյն ուսումնաւարտած մասնագէտներ, գիմնազիական ուսուցիչներ: Առանձնապէս առարկաներն են՝ կրօն, ռուսաց, հայոց, ֆրանսիական, գերմանական, լատինական, յունաց, վրաց լեզուներ, թուաբանութիւն, ալգեբրա, երկրաչափութիւն, աշխարհագրութիւն, պատմութիւն (ռուսաց և ընդհանուր), բնական գիտութիւն, նկարչութիւն, գրութիւն, երգեցողութիւն, երաժշտութիւն:

Նոյնտեղ ընդունվում են ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐ: Օտարաքաղաքացիների համար կան ամենայն յարմարութիւններ:

Հասցէն. ТИФЛИСЪ, Гановская ул., № 11 3-րդ գիմնազիայի մօտ: (Հ) 5—10

Իմ մագազինը փոխադրելով Դօրբժանսկու տունը, արքունական թատրօնի դիմաց՝ նշանակել եմ

Ա. ԶԱԼԻՆՕՎԻ

ՄԵԾԱՔԱՆԱԿ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Զինաստանի և Եապօնիայի գործիքների, զանազան գեղեցիկ իրեղէնների և բակեռներ շրջանակների համար: Մշտական գնողների ցանկութեան համաձայն՝ ստացված է չորրորդ պարտիա սինդապուրեան անանաս և թէյ՝ Պոպովի, Պերլովի, Վօգաուի, Բօտկինի և սեփական ֆիրմայի: Մէկ ֆունտ թէյ առնողին տրվում է ½ դիւժին բաժակ կամ ուրիշ ընծայ: Տելէֆօն № 501.

3—5 (Հ. Շ. Ե. Հ. Շ.) Ա. Զալինով

ԱՄԵՆԱՑԱՑՏՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ



ՐՕՅԵԱԼՆԵՐ



ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ

ՖԻՍ-ՀԱՐՄՕՆԻՈՒՄՆԵՐ, ՁՈՒԹԱԿՆԵՐ, ԿԻԹԱՌՆԵՐ, ՖԼԷՅՏՆԵՐ, ԿԼԱՐՆԵՏՆԵՐ, ՁԱՅՆԱԽԱՁԵՐ, ԼԱՐԵՐ, ԵՒ ԱՅԼՆ, ԵՒ ԱՅԼՆ:

Բոլոր տեսակ գործիքների համար գինը կարելի է վճարել մաս-մաս:

ՆՈՐ-ՊՐԷՑՍԿՈՒՐԱՆՏՆ

ուղարկվում է ձրի:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ ՁԱՅՆԱԽԱՁԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ-ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ

ԴԷՊՕ

Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ

Մատակարար Կայսերական Երաժշտական Ընկերութեան

Музыкалное депо Б. М. Мириманіана, ТИФЛИСЪ.
Дворцовая ул., д. Т. Д. З. Банка.
(Հ. Շ.) 1—20

ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻ

Վ. Յ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ

Միքայէլեան փողոց, տ. № 93. տելէֆօն № 506: (Հ.) 15—45



Կարելի է ստանալ. պ. Աղելխանովի մօտ—Միջին փողոց, Կովկասեան ընկերութիւնից—Երևանեան հրապարակ, Գ. Ա. Պապովեանից—Վօրոնցօվի կամուրջ. Եղբ. Եարգուլեաններից—Միջին փողոց. Ա. Գիրգիդօվից—Դվօրցօվայա փողոց. Ա. Վ. Աթավեանցից—Դվօրցօվայա փողոց. Լ. Տէր-Զաքարեանցից—Գօլովինսկի պրոսպեկտի Ֆիրմայի ներկայացուցիչ Պօլակ և ընկ.: Տելէֆօն 27, Սօլօլակսկայա փողոց: 2—10
(4, 11, 18, 25)

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւադնացութիւն ՄԱՐՍԷՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթիից,

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէյլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն և Պօլիս: Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 31 մարտի (12 ապրիլի), ՄԻՆԳՐԷԼԻ շոգենաւը, նաւապետ ՇԵԼՏ: Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ:

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով:

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նաբէրէժնայա: ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Խօջափարուխօվի և Մայսուրաձէ քարվանսարա: ԲԱԳՈՒ—պ. Ս. Դիլդարեանին, Կօլուբիակինսկայա հրապարակ: ՆՕՎՈՐՕՍՍԻՅՍԿ—պ. Մելխիօր Հերշենսօնին:
(Ե. Հ. Չ.) 12—20

Дозволено цензурою, Тифлисъ, 17 Марта 1899 г. Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул № 13.